

Կիպրոսի (1873—1874). առ. Պաղտատի (1874—80). Տեղապահ Մալաթիոյ (1883—84). առ. Հալէպի (1887—89). Հոգևոր Հովիւ Ամերիկահայոց (1894—97). կը ձեռնադրուի եպս. եւ կը կարգուի առ. Պարսկահնդկաստանի Հայոց 1898 ին: Կը մեկնի Ս. Էջմիածին 1901 ին. կը վերադառնայ եւ հիւրաբար կը մնայ Ս. Յակոբի վանքը (1903—8). Պոլիս կ'երթայ 1909 ին, ուր նախապէս վարած էր քարոզչական պաշտօններ, ու կը վարէ Գուգ-կունճուզի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին քարոզչութիւնը. 1922 ին կը վախճանի Ազգ. հիւանդանոցին մէջ: Ս. Էջմիածին գտնուած միջոցին հայերէնի թարգմանած է Ադրիանուպոլսեցի Պողոս պտրք.ի Պեշ տե՛նր ֆերդի երեք հատոր գիրքը (տպ. Վաղարշապատ, 1901):

ՄԱՂԱՔԻՍ. ԿՐՕՆԱԽՈՐ— Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարին մէջ 1625 ին կ'ընդօրինակէ Կիւրեղ հայրապետին Կոչումն ընծայութեան գիրքը ուր կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «...: Ծնորհիւ Տեառն եւ ողորմութեամբ նորին, գրեցի եւ կատարեցի զծաղկահաւաք մատենան Ս. Կիւրղի, որ էր գրած ի ս. արանց ի հին ժամանակին եւ անարգ ընկեցեալ կայր ի մէջ աղբիւսաց եկեղեցւոյ. եւ իմ առեալ թափ տուի ի յաղբէն եւ տեսի փտեալ եւ ցեց կերեալ. եւ գիրն անյոպայ երկաթագրին անյարմար մնամ ? թէ վասն գրին անյընդունելութեան ընկեցիկ եղեալ է. եւ ես զայս ամփոփեցի ի՞ն տարի եւ ոչ ոք հաւաս չկալաւ զսա ընթերցման. եւ ես զծերութիւնս եւ գտկարութիւն մարմնոյն ի բաց եղի, եւ վերստին գաղափարեցի յետոյ եկեալ բանասիրացո. բայց կու խնդրեմ ի սրբութեանց ձերոց ընթերցողաց եւ փոխարկողացո, որ անմեղադիր լինիք անյարմար գրիս, զի նիւթն անյարմար էր, եւ ժամանակն ձմեռն էր. եւ ես յուսահատեր էի ի կենացս. որ մէկ մի չեղև ընթերցող այսչափ գրեանուցս. որ հաւաքեցի, եւ գրեցի, ոչ միայն այս՝ այլ բազում, եւ գրել տեղս անպատշաճ. զի գ. տեղ փոխեցայ վասն գրելոյ, եւ վերջն ի Քրիստոսի լուսաբուխ Ս. Գեղեզմանն եւ Ս. Յարութիւն եղև. բայց այս գրոցս երկրորդ նորոգումն թվին ՆՂԸ. (=1049) եղեր. եւ երրորդ նորոգումն ՊԸ. (1359) եղեր է. եւ ես վերջի ծրագրողս նուստ եւ յետնեալս ի բանասիրաց. Մաղաքիա ծառայ Յիսուսի Քրիստոսի, ի յունւմ. ամսոյ սկսայ. որ թիւն էր ՌՉԳ (=1625) եւ ապրիլ ԻԸ. աւարտեցի. ողորմութեամբ